

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ
STUDI LINGUISTICI

ԳՐԱԲԱՐԻ ՏՊԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԶՎԿԱՅՈՒԱԾ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՅԻ ՄԱՍԻՆ (ԸՍՏ ՁԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԻ)

Գէորգ Զահուկեանը, անդրադառնալով եւ ճշգրտելով միջ-
նադարեան բառարաններում տեղ գտած նորայայտ որոշ բառերի
առաջարկուած ստուգաբանութիւններ եւ կատարելով բառաքն-
նական դիտողութիւններ, նշում է, որ «....միջնադարեան Հայաս-
տանի բառարանագրական յուշարձանների ուսումնասիրութիւնը կա-
րելուր միւթ է տալիս հայոց լեզուի պատմութեանն ու ստուգաբա-
նութեանը»¹: Միջին գրական հայերէնի բառապաշարի բառակազ-
մութեանն անդրադառնալիս լեզուաբանները գտնում են, որ
«....միջին գրական լեզուն վկայում է գրաբարին անծանօթ բազմա-
թիւ պարզ բայեր, որոնց մի մասը նորակազմութիւն է»²: Ասուածն
անվերապահօրէն կարելի է վերագրել հոմանիշների՝ ԺԸ.-ԺԹ.
դարերի, այլեւ նոյնանիշների՝ ԺԸ. դարի աւանդուած ձեռագիր
բառարաններին (այսուհետեւ՝ ՁԲ)³, թէեւ հարկ է արձանագրել,

- 1 ԶԱՀՈՒԿԵԱՆ, Գ., Ստուգաբանական դիտողութիւններ միջնադարեան բա-
ռարաններում տեղ գտած նորայայտ բառերի մասին.- Լրաբեր հասարա-
կական գիտութիւնների, Երեւան 1976, 12, Ե., 41:
- 2 Ակնարկներ միջին գրական հայերէնի պատմութեան, Խ. Ա., Երեւան 1972,
Էջ 300:
- 3 Ըստ Մաշտոցի անուան Մատենադարանի ձեռագրացուցակների՝ ԺԸ. դա-
րի աւանդուած մի շարք ձեռագրերում ամփոփուած են հոմանիշների
առաւել ամբողջական բառարանները՝ հետեւեալ խորագրերով՝ «Նշանա-
ւումն նոյնանշան բառից ըստ դասաւորութեանց մերոց տառիս» (ՄՄ 566,
234բ-279ա), «Հաւաքումն բառից որք նշանակութեամբ նոյն կամ մերձա-
ւորք են. Մատթէոսի Վ. Բառգիրք հոմանիշ բառից» (ՄՄ 3110, 75ա-112ա),
«Բառք նոյնանշանք՝ ժողովեալք ըստ այրուքներից, ի Մխիթարեան Մատ-
թէոսի գերերջանիկ վարդապետէ» (ՄՄ 873 և 775, համապատասխանաբար՝
185ա-220բ և 53ա-80ա): Նշուածներից հարկ է յաւելել նաեւ ՄՄ 6762 ձեռա-
գրում գետեղուած անխորագիր բառարանը (101ա-130բ), քանի որ ձեռա-

որ, ի տարբերություն հոմանիշների՝ ԺԲ.-ԺԷ. դարերի աւանդուածների, որոնցում առաւելապէս առկայ են պարզ բայեր, ինչպէս՝ վշտել, վարսել, առակել, ամօթել, տնագել, շիւարել նոյնանիշների՝ ԺԸ. դարու աւանդուած ԶԲում գերակշռում են ածանցաւոր եւ բաղադրեալ կազմութիւնները: Նշուած ԶԲները չունեն բնագրային օրինակներ, հետեւաբար գրաբարի տպագիր բառաններում չարձանագրուած, այսինքն՝ նորակազմ կամ նորակերտ բայերի գոյութիւնը փորձ է արւում հաստատել հայերէնի բառակազմութեան կաղապարային կառոյցների առանձնաշատկութիւններով, յետազայում լոյս տեսած բառարաններով, հնարաւորութեան դէպքում՝ նաեւ բնագրային օրինակներով⁴:

ԱՌԱԿՑԵԼ – ԱՌԲԱՍՐԵԼ

Խօսքը վերաբերում է առակցել, առբասրել, հակագիմել, հակամարտել, մանրախոյզել, մեղարկել, պայմանաւորել, սակարկել, տրտմակցել բայերին:

Առանձնացուած բայերից առակցելը եւ առբասրելը նախածանցաւոր են:

Հ. Աճառեանը, անդրադառնալով առ նախդրին, նշում է, որ այն «Շատ սովորական է քառակերտութեան մէջ, ուր դրւում է բառակցքում կամ մի մախդիրից յետոյ...»՝ յաւելելով՝ «Յունարան հեղինակների մօտ դարձել է յմ. πρὸς ἀντις համապատասխան մախամանիկ, որով կազմուած են քազմաթիւ քառեր», յիշատակելով նաեւ առերել, առդմել բայերը⁵:

Աղբալիսին է նաեւ կցել յենաբառով նոյնանիշային շարքում (այսուհետեւ՝ ՆՇ) ընդգրկուած, առով եւ կից արմատից կազմուած կցելով բաղադրուած առակցել բայը (ՄՄ 6762, 113այ-113բ. 566 (I), 254այ): Այն, ըստ «Գրաքաւաք» կայքի որոնումների տուեալների, մի քանի անգամ վկայուած է Յ. Վիլլոտի՝ 1714 հրատարակուած լատիներէն-հայերէն նոր բառարանում. «կապել. բեւեռել.

գրերի համեմատութիւնից պարզւում է, որ վերջինս եւ ՄՄ 566-իմը որոշ տարբերութիւններով համընթաց են: Այսուհետս ձեռագրաքաւաքը եւ էջերը տրւում են շարադրամբում՝ փակագծերի մէջ: Պահպանուած է ձեռագիր քառարանների ուղղագրութիւնը:

4 Դրանք քաղելու հնարաւորութիւն է ընձեռում «Գրաքաւաք» կայքի «հայերէն քննարկների աղանց շտեմարանում» հայերէն քառերի որոնումը:

5 ԱՃԱՌԵԱՆ, Հ., *Հայերէն արմատական քառարան* (այսուհետեւ՝ ՀԱՌ), հտ. 1, Երեւան 1971, էջ 247:

պնդել», «կցել. միաւորել. յօդել. յարել», «առադրել» բայերի շարքում յիշատակուած են նաեւ առակցելը եւ առկցելը⁶։ Բայը գործածուած է նաեւ Խաչատուր Էրզրումեցին՝ 1736 հրատարակուած «Կարմատագունեղ համառոտութիւն....» երկում՝ «Վասն այսորիկ պիտոյ է աղօթել, եւ աղօթից գողորմութիւն առակցել» նախադասութեան մէջ⁷։ Առակցեմը «տե՛ս Յօդել» յղումով վկայուած է նաեւ Մխիթար Սեբաստացին⁸։

Առկցեալ բառն արձանագրուած է Ս. Գաբամաճեանը «բանի մը կցուած. աւելցած» բացատրութեամբ՝ միաժամանակ օգտագործելով աստղանիշ եւ հաւաստելով, որ «Բառերու առջեւ դրուած աստղանիշ կը ցուցնէ նոյն բառերուն նոր շինուած ըլլալը»⁹։ Ըստ Ս. Մալխասեանցի՝ «Կցել, իրար հետ կապակցել» նշանակութեամբ առկցելը «հագուադէպ բառ» է¹⁰, բայց եւ նոյն նշանակութեամբ այն արձանագրուած են արդի հայերէնի բացատրական եւ հոմանիշների բառարանները¹¹։

Առով եւ «պարսաւելի, անարգելի» նշանակութեամբ բասիր արմատից կազմուած բասրելով բաղադրուած առքասրելը¹² առկայ է Ջատագովել յենաբառով ՆՄՈՒՄ՝ «(եթէ յարմար իցէ բանին. դիր եւս)» բացատրութիւնից յետոյ՝ արդարացուցանել զբան նոցա կամ զնա. անմեղադիրիկ ցուցանել զբան նոցա կամ զնա կապակցութիւնների կից (ՄՄ՝ 6762, 123բ. 566 (I), 269ա)։

Բայը, ըստ բառարանների, նաեւ «Գրահաւաք» կայքի որոնումների տուեալներով, առաջին անգամ «արդարացնել» նշանակութեամբ վկայուած է Յ. Շրոյդերը՝ «Արամեան լեզուին գանձ»

6 VILLOTTE, J., *Dictionarium Novum Latino-Armenium*, Roma 1714, pp. 33, 69, 680.

7 Կարմատագունեղ համառոտութիւն շարադրեցեալ ի լատինականի լեզուոջ ի գերապատուելոյ Խաչատրոյ Երզրումեցոյ, Վենետիկ 1736, էջ 283։

8 ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ, *Բառգիրք հայկազեան լեզուի* (այսուհետեւ՝ ԲՀԼ), հտ. 1, Վենետիկ 1749, էջ 56։

9 ԳԱԲԱՄԱՅԵԱՆ, Ս., *Նոր քառագիրք հայերէն լեզուի* (այսուհետեւ՝ ԳՆԲՀԼ), Կ. Պոլիս, 1910, էջ 169 եւ Ը։

10 ՄԱԼԽԱՍԵԱՆՑ Ս., *Հայերէն բացատրական բառարան* (այսուհետեւ՝ ՄՀԲԱ), հտ. 1, Երեւան 1944, էջ 229։

11 Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարան, Երեւան, հտ. 1, 1969, էջ 180։ ԱՂԱՅԵԱՆ, Է., *Արդի հայերէնի բացատրական բառարան* (այսուհետեւ՝ ԱՀԲԱ), Երեւան 1976, էջ 107։ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ, Ա., *Հայոց լեզուի հոմանիշների բառարան* (այսուհետեւ՝ ՀՀՀԲ), Երեւան 1967, էջ 82։

12 Ձեռ. 6762-ում առ բասրել տարբերակն է։

աշխատութեան մէջ առքաւարելը (excusare) բացատրելիս նշելով անմեղադիր լինել յարադրութիւնը¹³:

Քառորդ դար յետոյ Մ. Սեբաստացին Առքաւարեմ բառա-
յօդուածում արձանագրում է. «.... նոյն է ընդ բային քարել. որ է
պարսաւել կամ մեղադրել եւ այլն. քանզի մասնիկն առ ոչ է բաց-
քարձական. այլ ստորասական եւ թարմատար. որպէս յայտ է ի բա-
յէն առնուլ. որ է լնուլ. բայց ոմանք ի նորոց շրջեալ զսա ի ներ-
հակն, ի գործ ածեն փոխանակ արտաքարելոյ. որ է անմեղադիր
առնել կամ ջատագովել» (ԲՀԼ, էջ 59): Աբբահօր՝ 1739ին հեղինա-
կած «Մեկնութիւն գրոց ժողովողին» երկասիրութեան «Եւ որքան
առ այսպիսի իմաստութիւն, ոչ ոք որքան եւ իցէ քթամիտ (միայն
թէ չիցէ խելագար) կարէ առքաւարել զինքն....» նախադասութեան մէջ
գործածուած առքաւարելն անվերապահօրէն ունի «պարսաւել կամ
մեղադրել» իմաստը¹⁴:

Մխիթար Սեբաստացու՝ առքաւարելը «արդարացնել» նշանա-
կութեամբ գործածելու մասին դիտարկումը թերեւս կարելի է
վերագրել եւ հաւանական համարել Հ. Ղ. Ալիշանի հեղինակած
տարեգրքում առկայ «.... եւ ի մէջ այլոց քանից՝ ասէ. վաճառ աղ-
բատ է, եւ սակաւ եղբարք բնակեմք, ոչ ունենալով գոյաւորու-
թիւն, եւ ոչ զանկողինս բաւական: Իբր կամէր այսու առքաւարել
զինքն, եթէ ոչ պաշտպանիցէր ինձ....» նախադասութեան դէպ-
քում¹⁵:

Ըստ Մ. Մալխասեանցի՝ առքաւարելը «Բարել, պարսաւել,
մեղադրել» նշանակութեամբ «հագուադէպ բառ» է (ՄՀԲԲ, հտ. 1,
էջ 226), նոյն նշումով եւ միեւնոյն նշանակութեամբ է արձանա-
գրում այն նաեւ ՀԼՀԲ-ն (ՀԼՀԲ, էջ 114):

Ի տարբերութիւն առկցելի՝ առքաւարելը՝ «պարսաւել» նշանա-
կութեամբ եւ «(հնց.)» նշումով, արձանագրուած է միայն Յ. Բար-
սեղեանի «Հայերէն ուղղագրական-ուղղափոսական, տերմինաբան-
կան բառարանում»¹⁶:

13 ՇՐՈՑԳԵՐ, Յ., Արամեան լեզուին գանձ, Ամստերդամ 1711, 387:

14 ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ, Մեկնութիւն գրոց ժողովողին, Վեներտիկ 1736,
էջ 299:

15 ԱԼԻՇԱՆ, Հ. Ղ., Կամենից. Տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռումինիոյ հա-
ւաստեայ յաւելումով, Վեներտիկ 1896, էջ 155:

16 ԲԱՐՍԵՂԵԱՆ, Յ., Հայերէն ուղղագրական-ուղղափոսական, տերմինաբա-
նական բառարան, Երեւան 1973, էջ 113:

ՀԱԿԱԶԻՆԵԼ – ՀԱԿԱՄԱՐՏԵԼ

Հակառակել. կամ հակառակ կալ. ընդդիմանալ. կամ ընդդեմ կալ. ընդդիմամարտել ՆՇում առկայ (ՄՄ 566 (I), 254բ. 6762, 113բ) հակազինել եւ հակամարտել բայերը բաղադրուած են ըստ Հ. Աճառեանի «յետոսկեդարեան հայերէնի մէջ» շատ գործածական «յն. օնտ օնկն» համապատասխան հակ նախամասնիկով. Հ. Աճառեանը «նոր գրականում կազմուած բազմաթիւ բառեր»ի շարքում արձանագրում է նաեւ հակամարտութիւնը (ՀԱԲ, հտ. 3, էջ 11-12): Հակազինելը վկայում են Թ. Վիլլոտը, Մխիթար Սեբաստացին. առաջինը նաեւ այդպէս է բացատրում լատիներէն *defendo*¹⁷, երկրորդը՝ գործածում «Բայց եթէ ընդդեմ վնոյ քահանայապետին, եւ ծերոց հակազինեալ առնիցէին զամբոյս՝ ոչ լիէին պատժապարտք....» նախադասութեան մէջ¹⁸: Է. Աղայեանը նշում է միայն հակազեմք բառը «հակամարտելու՝ դիմադրելու գեմք» բացատրութեամբ (ԱՀԲԲ, էջ 792):

Թ. Վիլլոտը նոյն բառայօդուածում վկայում է նաեւ հակամարտելը¹⁹: Մխիթար Սեբաստացին վերջինս արձանագրում է «հակառակ ումեք մարտնչիլ. կամ հակազինիլ. կամ ընդդիմանալ. եւ կամ հակառակիլ թէ մարտիլ իցէ, թէ բանիլ, եւ թէ գանիլ» իմաստներով (ԲՀԼ, էջ 493), այլեւ յիշատակում գրաբարի քերականութեանը նուիրուած աշխատութեան մէջ²⁰: Յետագայում հակամարտելը վկայում են Ս. Մալխասեանցը (յղում է ընդդիմամարտելին. ՄՀԲԲ, հտ. 3, էջ 14), Է. Աղայեանը՝ «հակադրուել, ընդդիմամարտել. մի բանի դէմ կռուել. փխդրձ. իրար դէմ կռուել՝ պայքարել» նշանակութիւններով (ԱՀԲԲ, էջ 793), ԺՀԼԲԲ-ն՝ «(հզվդ.)» նշումով (ԺՀԼԲԲ, հտ. 3, էջ 259), այլեւ արեւմտահայերէնի բառարանները²¹:

17 VILLOTTE, J., *Dictionarium Novum Latino-Armenium*, p. 199.

18 Մեկնութիւն սրբոյ Աւետարանի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի, արարեալ եւ շարադրեալ ի Մխիթարայ Սեբաստացոյ, Վնենտիկ 1737, էջ 812:

19 VILLOTTE, J., անդ:

20 Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազեան սեռի, Շարադրեցեալ աշխատախորհրդամբ Մխիթարայ Սեբաստացոյ, Վնենտիկ 1730, էջ 547:

21 ՀէրէձեմԱն, Գ. – ՏՕՆԻԿԵԱՆ, Փ. Կ. – ՏԷՐ ԽԱԶԱՏՈՒՐԻԱՆ, Ա., Հայոց լեզուի մոր բառարան, Պէյրուք, հտ. 1, 1992, էջ 1097: ՍԱՔԱՊԵՏՈՅԱՆ, Ռ.,

ՄԱՆՐԱԽՈՒՋԵԼ

ԺԲ.-ԺԳ. դարերի աւանդուած ՄՄ 5596ում՝ Հայցել²² յենաբառով հոմանիշային շարքում հանդիպում է մանրախուզել բայը (220ա): Գրաբարի տպագիր բառարանները վկայում են մանր եւ խոյզ արմատներով բաղադրուած մանրախոյզը՝ մանր խուզող, պրպտող՝ *իմաստով*²³: Մանրախուզեմը վկայում է Մ. Սեբաստացին՝ «մանրամասն խուզել. կամ հետազօտ քննութեամբ որոնել» նշանակութեամբ (ԲՀԼ, էջ 615): Մանրախուզել բայը գործածուած է Վարդան վարդապետը «Հաւաքումն պատմութեան» գրքի առաջաբանում՝ *նշելով*՝ «....կամ առ ծերութեան հասակին ոչ բաւեալ մանրախուզել ի ստոյգ պատմչաց....»²⁴:

ՆՀԲն նրբաբայել բայի «նուրբ բայիւմ այսինքն քառիւմ եւ քանիւմ խօսել, յուզել» *իմաստը բացատրելիս յիշատակում է նաեւ մանրախուզելը* (ՆՀԲ, մ.տ.): Այսինքն՝ կարելի է նշել, որ բայը կիրառել են Մխիթարեան միաբանութեան հայրերը: Այն իբր գլխաբառ արձանագրում են Մ. Զախչախեանը՝ «մանր խուզիլ կամ որոնիլ» բացատրութեամբ²⁵, եւ Մ. Մալխասեանը՝ «հագուադէպ բառ» նշումով եւ «Մանրամասնօրէն՝ մանրագին կերպով խուզարկել, հետազօտել, քննել» նշանակութեամբ (ՄՀԲԲ, հտ. 3, էջ 256):

Արդի հայերէնի բացատրական բառարանները մանրախուզելը չեն վկայում, բայց եւ արձանագրում են մանրախոյզ, մանրախուզօրէն, մանրախուզութիւն բառերը:

ՆԵՂԱՐԿԵԼ - ՍԱԿԱՐԿԵԼ

Միայն ՄՄ 566 (II)ում (298ա)՝ ցասնուլ. գայրանալ. վրոպիլ. խոռվիլ. աղմկիլ. քարկանալ. ցնդասրտիլ հոմանիշային շարքում է

Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր քառարան, Երեւան 2011, էջ 173: ԿԻԱՆԵԱՆ, Ա., Բառգիրք գործնական հայերէնի, Պէյրութ 1998, էջ 229:

- 22 Ուշագրաւ է Հայկազեան քառարանի նշումը Հայցել բառայօդուածի վերջում. «Ի Հին բո. որպէս փաղանուն դնին, *Հայցել, այցել, զննել, յուզել, խնդրել». Նոր քառգիրք հայկազեան լեզուի (այսուհետեւ՝ ՆՀԲ), հտ. 2, Վեներտիկ 1837, էջ 35:
- 23 ՆՀԲ, հտ. 2, էջ 455: Առձեռն քառգիրք հայկազնեան լեզուի (այսուհետեւ՝ ԱԲ), Վեներտիկ 1865, էջ 540:
- 24 Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսարանալ, Վեներտիկ 1862, էջ է:
- 25 ԶԱՆԱՅԱՆԵԱՆ, Մ., Բառգիրք ի քարքառ հայ եւ իտալական (այսուհետեւ՝ ԶԲ), Վեներտիկ 1837, էջ 947:

հանդիպում մեղ (ՀԱԲ, 3, 439) եւ Հ. Աճառեանի հաւաստմամբ՝ «ձգել» իմաստով «հմերի մէջ ... առանձին անգործածական» արկ (ՀԱԲ, հտ. 1, էջ 320) արմատներով բաղադրուած մեղարկել բայը, որն ամենայն հաւանականութեամբ «մեղը գցել, մեղել» նշանակութեամբ ի մեղ արկանել դարձուածային միաւորի (ՆՀԲ, հտ. 2, էջ 410)²⁶ կրճատ եւ միասին գրութիւնն է. այն կազմութեամբ յիշեցնում է Ս. Էլոյեանի՝ 2002ին հրատարակուած «Արդի հայերէնի մորաբանութիւնների բառարանում» արձանագրած եւ վերջերս լայնօրէն կիրառուող չեղարկել²⁷:

Ինչ վերաբերում է նոյն ՆՇՈՒՄ «(եթէ ի յառ եւ ի տուր)» բացատրութիւնից յետոյ առկայ սակարկելին, ապա «պայման, սահմանուած չափ.... կարգ, դաշմ, օրէմք» նշանակող սակ (ՀԱԲ, հտ. 4, էջ 157) եւ արկ արմատներով բաղադրուած սակարկել բայի՝ «սակարկութիւն ընել» նշանակութեամբ «մոր շինուած ըլլալը»ն է արձանագրում Ս. Գաբամաճեանը (ԳՆԲՀԼ, էջ 174): Հ. Աճառեանը նոյնպէս այն դիտում է «մոր բառ» (ՀԱԲ, հտ. 4, էջ 157):

Նոր հայկազեան բառգիրքը սակ արկանելի համար նշում է միայն «դաշմաւորի» իմաստը (ՆՀԲ, հտ. 2, էջ 684)՝ վերջինս բացատրելով որպէս «Դաշմաբք հաստատել. ուխտել. դաշինս կռել. դաշմաւոր լինել. հաշտիլ. միաբանիլ. խօսք դնել կամ տալ» (ՆՀԲ, հտ. 1, էջ 595), իսկ ԱԲՆ՝ «գին կտրել, դաշ դնել» (ԱԲ, էջ 710). այս իմաստը՝ «Սակարկել, գին կտրել՝ մշանակել», նշում է նաեւ ԳԴԲՆ (ԳԴԲ, էջ 250): Գ. Փէշտըմալճեանը սակ արկանելը յղում է «դաշմաւորի ընդ ումեք վասն գնոց իրիք պայմանել զվարձս» նշանակութեամբ սակարկանելին²⁸: Հետեւաբար կարելի է նշել, որ, թէեւ ԺԸ. դարու աւանդուած ԶԲՈՒՄ «(եթէ ի յառ եւ ի տուր)» բացատրութեամբ առկայ է սակարկել բայը, սակայն ըստ բառանային տուեալների՝ ԺԹ. դարու դեռեւս կիրառուել է սակարկանելը: Ս. Մալխասեանցը եւ արդի հայերէնի բացատրական բառարանները սակարկելի համար առաջնային են դիտում «Ապրանքի կամ աշխատանքի գնի մասին խօսել իրար հետ՝ համաձայ-

26 Նաեւ՝ ՂԱԶԱՐԵԱՆ, Ռ., Գրաբարի դարձուածաբանական բառարան (այսուհետեւ՝ ԳԴԲ), Երեւան 2012, էջ 130:

27 ԷԼՈՅԵԱՆ, Ս., Արդի հայերէնի մորաբանութիւնների բառարան, Երեւան 2002, էջ 386:

28 ՓԵՇՏՐՄԱԼՃԵԱՆ, Գ., Բառգիրք հայկազեան լեզուի, հտ. 2, Կ. Պոլիս 1846, էջ 620-621:

նութեան գալու նպատակով» *Խմաստը* (ՄՀԲԲ, հտ. 4, էջ 171. ԱՀԲԲ, էջ 1269. ԺՀԼԲԲ, հտ. 4, էջ 262)²⁹:

ՊԱՅՄԱՆԱՌՈՐԵԼ

Միայն ՄՄ 6762ում՝ Ուխտել յենաբառով նշում, «(եթե ընդ մարդկան իցե եւ պիտոյ իցե դմի եւս) դաշինս կռել. զպայման դնել» բացատրութիւնից յետոյ պայմանելի փոխարէն առկայ է պայմանաւորել բայը (120բ): Գրաբարի տպագիր բառարանները վկայում են պայմանաւորել՝ «Որ ինչ ունի զպայման. ուխտական. վնտական...» (ՆՀԲ, հտ. 2, էջ 595. ԱԲ, էջ 678): Հ. Աճառեանը «նոր քառեր»ի շարքում յիշատակում է պայմանաւորուիլ բայը (ՀԱԲ, հտ. 4, էջ 18): Պայմանաւորել բայը Ս. Մախասեանցի բառարանում առկայ է «1. Որեւէ պայմանով սահմանափակել, խոստանալ կամ համաձայնել որոշ պայմանով...» նշանակութեամբ (ՄՀԲԲ, հտ. 4, էջ 46): Նոյն նշանակութիւնն է արձանագրում է՝ Աղայեանը (ԱՀԲԲ, էջ 1177), մինչ «Ժամանակակից հայոց լեզուի բացատրական քառարանը» («Իզվդդ») նշումով արձանագրում է միայն «Այս կամ այն պայմանով սահմանել, նախապայման հանդիսանալ»-ը, «Համաձայնութեան գալ, համաձայնուել»ը նշելով պայմանաւորուել բայի համար (ԺՀԼԲԲ, հտ. 4, էջ 157): Հետեւաբար կարելի է թերեւս ընդունելի կամ հաւանական համարել, որ ԺԸ. դարու աւանդուած ձեռագիր բառարանում պայմանաւորել բայը նոյն նշանակութիւնն ունի, ինչ Հ. Աճառեանի՝ «նոր քառեր»ի շարքում յիշատակած պայմանաւորուիլը:

ՏՐՏՄԱԿՑԵԼ

Լալ յենաբառով նշում (ՄՄ 566 (I), 247բ, 6762, 109բ) առկայ է տրտմակցել բայը, որ ներառուած է շարքին յաւելուած (եթե ընդ այլոց դմի) արտասուակցորդ լինել. ողբակցել. ցաւակից լինել հատուածում: Ըստ Հ. Աճառեանի՝ բնիկ հայերէն տրտում «տխուր, վշտալի» (ՀԱԲ, հտ. 4, էջ 440) եւ ըստ Գ. Զահուկեանի՝ «քերեւս բնիկ հնդեւրոպական՝ *geit-so- կամ *geit-sk- կից «մօտ,

29 Նաեւ՝ ձէրէձեւԱն, Գ. – ՏՕՆԻԿԵԱՆ, Փ. Կ. – ՏէՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ, Ա., մշ. աշխ., հտ. 2, էջ 769: ՏէՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ, Ա. – ԳԱՆԳՐՈՒՆԻ, Հ. – ՏՕՆԻԿԵԱՆ, Փ. Կ., Հայոց լեզուի մոր քառարան, Պէյրուք 1968, էջ 745: ՃԻՋՄԵՅԵԱՆ Պ., Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար քառարան, հտ. 2, Հալէպ 1954, էջ 1258: ԿՌԱՆԵԱՆ, Ա., մշ. աշխ., էջ 403:

կպած, միասին»³⁰ արմատներով բաղադրուած, «միասին տրտմել» նշանակութեամբ բայը վկայուած են միայն Ս. Մալխասեանցը (ՄՀԲԲ, հտ. 4, էջ 449) եւ արդի հայերէնի բացատրական բառարանները (ԱՀԲԲ, էջ 1462. ԺՀԼԲԲ, հտ. 4, էջ 536)³¹:

Այսպէս, քննութեամբ պարզուած է, որ ԺԸ. դարու աւանդուած ձեռագիր բառարաններում առկայ, բայց եւ գրաբարի տըպագիր բառարաններում չվկայուած բայերը հաւաստում են, որ ընդօրինակող գրիչները ստեղծել կամ յաւելել են բայեր, որոնք գործածել են ժամանակակիցները. այդ բայերն արձանագրուած են Մխիթար Սեբաստացու՝ ԺԸ. դարուն լոյս տեսած բառարանում, այլեւ ըստ բառարանային տուեալների՝ պահպանուել են հայոց լեզուի արեւելահայ եւ արեւմտահայ տարբերակներում:

ՆԱԶԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

30 ԶԱՀՈՒԿԵԱՆ, Գ., Հայերէն ստուգաբանական բառարան, Երեւան 2010, էջ 407:

31 Նաեւ՝ ձերեմեան, Գ. - ՏՕՆԻԿԵԱՆ, Փ. Կ. - ՏԵՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ, Ա., մշ. աշխ., հտ. 2, էջ 989: ՏԵՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ, Ա. - ԳԱՆԳՐՈՒՆԻ, Հ. - ՏՕՆԻԿԵԱՆ, Փ. Կ., մշ. աշխ., էջ 846: ՍԱՔԱՊԵՏՈՅԵԱՆ, Ռ., մշ. աշխ., էջ 351:

Summary

ON SOME UNVERIFIED VERBS IN THE PRINTED
DICTIONARIES
OF CLASSICAL ARMENIAN
(According to manuscript dictionaries)

NAZIK HOVHANNISYAN

In his review of the proposed etymologies of some “recently rediscovered” words, recorded in medieval dictionaries, Gevorg Jahukyan notes that the study of lexicographic monuments of medieval Armenia provides important material for the history of Armenian language and etymology.

The fundamental source are manuscript dictionaries of synonyms of the 12th-17th centuries. As there are no textual examples in these dictionaries, an attempt is made to deduct the existence of words from the structures of Armenian language formation, dictionaries published later, and, to the extent possible, textual examples.

We study the verbs *arakcel*, *arbasrel*, *hakazinel*, *hakamartel*, *manrakhuzel*, *negharkel*, *paymanavorel*, *sakarkel*, and *trtmakcel*.

Considering the aforementioned verbs, it turns out that the scribes created or added verbs that were used by contemporaries: these words are recorded in the dictionary Mekhitar Sebastatsi (18th century) and, according to dictionaries, are preserved in the Eastern and Western Armenian branches of the Armenian language.